

Աղբատներուն ողորմութիւն ընելու մասին

Անոնք, որ շատ հարստութիւն կը հաւաքեն եւ ողորմութիւն չեն սերմաներ, դատարկ ձեռքով կը մեկնին այս աշխարհէն եւ կ'առաքուին անտանելի եւ անողորմ կրակը: Եւ Տէրը այս մէկը կ'իմացնէ երբ կ'ըսէ. «Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս մը, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք. որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք յաիտենական յարկերուն մէջ ընդունին» (Գուկ. 16.9): Նոյնը Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Միրոյ հետամուտ եղէք ու նաեւ նախանձախնդիր աղքատներու ողորմութեան, որովհետեւ դուք ալ Քրիստոսէ ողորմութիւն պիտի ստանաք» (Ա. Կոր. 14.1): Ո՛չ մէկ բան կը թեթեւցնէ մեղքին ծանրութիւնը, բացի աղքատին տրուած ողորմութենէն եւ գութէն. ինչպէս սուրբ Դանիէլ Նաբուգոդոնոսորին կ'ուսուցանէր, երբ ան իր մեղքերուն պատճառաւ հիւանդացած էր. մարգարէին կը հարցնէր, թէ ինչպիսի դեղեր կան այս հիւանդութեան համար եւ Դանիէլ որպէս բժիշկ իրեն մօտենալով կ'ըսէր. «Ո՛վ արքայ, ո՛չ պահքը, ո՛չ արթուն ըլլալը, ո՛չ քուրճը եւ ոչ ալ առանձնութիւնը կրնան օգտակար ըլլալ, այլ՝ գնա՛ եւ մեղքերդ ողորմութեամբ քաւ՛, իսկ անօրէնութիւններդ՝ աղքատներուն գթալով: Այս արարքն է, որ քեզ պիտի արդարացնէ եւ այս ճանապարհն է, որ քեզ յաիտենական կեանք պիտի առաջնորդէ» (Դանիէլ. 4.27):

ԽՐԱՏՆԵՐ



ՄՈՍԱՎԱՌՈՒԹԵԱՆ ԻԱՍՍԸ

Մոսի գործածութիւնը առհասարակ՝ հարուստ եւ խորունկ իմաստ ունի: Ծիսական կեանքին մէջ ան կը խորհրդանշէ Քրիստոս՝ աշխարհի լոյսը, որ կը հալածէ մեղքի խաւարը: Անձնական գործածութեան պարագային միշտ աղօթքը կ'ընկերանայ անոր: Պալլացող մոմը աղօթքով, մեզի միշտ կը յիշեցնէ, որ «Լոյսի եւ ցերեկի որդիներ ենք», ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ (Ա. Թեղ. 5:5), պատրաստ ստեղծագործելու բարի գործեր, նման մեր արարիչ Աստուծոյ, եւ ըլլալու լոյս, հոն ուր խաւար է: Ննջեցեալի հոգւոյն, հիւանդի առողջութեան, գործի յաջողութեան համար վառուող մոմը աղօթքով, երախտագիտութեան համեստ արարք մըն է առ Աստուած, խնդրելով իր կամքին կատարումը ի լուսաւորութիւն ապրող ու գինուորագրեալ եկեղեցւոյ անդամներու սրտերուն ու մտքերուն, եւ ի հանգիստ՝ ննջող ու յաղթական եկեղեցւոյ անդամներու հոգիներուն:

ՏՕՆԱՑՈՅՑ

- 5 Յունուարին՝ Ճրագալոյց
- 6 Յունուարին՝ Ս. Ծնունդ
- 7 Յունուարին՝ Յիշատակ Մեռելոցի

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագրերը



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՌԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ՅՈՒՆԻՈՒԱՐ 2021

ԹԻԻ 1

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 51.15-52 Եբր. 13.18-25

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 22.24-30

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 22.24-30

Աշակերտներուն մէջ վեճ ծագեցաւ, թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ. «Ազգերու թագաւորներ կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը. սեղան նստողը, թէ սպասաւորը: Անշուշտ, որ սեղան նստողը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս մնացիք փորձութիւններու ընթացքին. եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզի, ինչպէս Հայրս ինձի տալ խոստացաւ: Իմ սեղանէս պիտի ուտէք եւ խմէք իմ թագաւորութեանս մէջ, եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը»:

Ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս

Մեր Տէր Յիսուսի խօսքն է եւ յորդորը, որ տարօրինակ կը թուի անոնց, որոնք հեռու են Քրիստոսի սերէն եւ հայրական գութէն: Ընդհանուր մարդկութիւնը կ'ըմբռնէ մեծութեան իմաստը հետեւեալ հասկացողութեամբ մեծ կը նկատէ այն անձերը, որոնք հակաամակ կամ պաշտօնի կամ այլ տարբեր դիրքի վրայ գտնուողները: Սակայն Քրիստոս մեզի շատ պարզ ձեռով կը փոխանցէ մեծութեան իմաստը: Մեծութիւնը անմեղութեան ու անկեղծութեան մէջ է եւ այս իմաստով կ'ըսէ՝ պէտք է փոքրերու հոգի ունենալ մեծ դառնալու համար, նաեւ առաջնորդ դառնալու համար պէտք է սպասաւոր ըլլալ: Առաջնորդ Քրիստոսը սպասաւորեց ժողովուրդին իր խոնարհութեամբ ու հեզութեամբ: Ապրիկը Քրիստոսի խօսքերով եւ այդ խօսքերը թող դառնան մեր կեանքի ուղեցոյցը:

ԵՐԱԳԱԼՈՅՑ



Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկի նախորդ օրը կը կոչուի Ճրագալոյց: Ճրագալոյց կը նշանակէ նրագ վառել, մոմ վառել: Կարելոր եւ մեծ տօներու առթիւ սովորութիւն էր եկեղեցւոյ կանթեղները վառել եւ ներկայ հաւատացեալներուն մոմ բաժնել՝ վառելու համար: Այժմ նրագալոյց կը կոչուին Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկուան նախորդ օրերը:

Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ միայն երկու անգամ երեկոյեան Ս. Պատարագ կը մատուցուի՝ Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկուան Ճրագալոյցին: Ժամերգութենէն ետք կը կատարուի Ս. Գրային ընթերցումներ: Ճրագալոյցին օրը յատկանշական է մանաւանդ Դանիէլ Մարգարէի ընթերցումը, որմէ անմիջապէս ետք կը սկսի Ս. Պատարագը:

Պատարագի ընթացքին բազմաթիւ հաւատացեալներ կը հաղորդուին: Իսկ պատարագէն ետք կը կատարուի յաջորդ օրուան տօնի նախատօնակը:

Ճրագալոյցի ընթերիքին համար իւրաքանչիւր գաւառ եւ միջավայր առաւել կամ նուազ չափով իրարու նման իւրայատուկ սովորութիւններ ունէին:

Այդ օրը, սովորաբար, ընթերիք բաղկացած կ'ըլլայ ձկնեղէնէ, բանջարեղէնէ եւ ապուրէ:

Ճրագալոյցի երեկոն կը կոչուի նաեւ Խթում: Խթումը կարելի է ուտիքի նախատօնակ համարել:


Հայկական սովորութիւն է, որ Խթման երեկոյեան ընտանիքի անդամները միասնաբար հաւաքուին ընտանիքի երէց անդամին բնակարանը, ի նշան յարգանքի: Այս ձեւով ամբողջ ընտանիքը կը համախմբուի սիրոյ սեղանին շուրջ՝ բաժնելով «Բարի Լուր»ը եւ նշակելով ու միասնաբար վայելելով Խթման սիրոյ սեղանը:

Նոյն օրուան ժողովրդական սովորութիւն է, որ երեկոյեան խումբ խումբ եկեղեցւոյ դպրաց դասի անդամներ այցելեն հաւատացեալներու տունները աւետելու համար Քրիստոսի Ծնունդը:

Լիբանանի Թեմէն ներս աւետելու աւանդութիւնը կը շարունակուի մինչեւ օրս: Ծիսական շրջաններուն մէջ եկեղեցւոյ դպրաց դասի անդամները ինչպէս նաեւ Կիրակնօրեայ դպրոցներու աշակերտները կ'այցելեն հաւատացեալներու տունները եւ կ'աւետեն Քրիստոսի Ս. Ծննդեան աւետիսը:



Հարօնու - Ի՛նչ է Տնօրչւէրը:
Պատասխան - Աւանդութիւնը սկիզբ կ'առնէ Առաքելական դարուն, երբ առաքելները եւ հոգեւորականները կը շրջէին տունները եւ կ'աւետէին Յիսուսի Ծնունդը եւ Յարութիւնը: Այս սովորութեան համաձայն քահանաները կը շրջին տունները՝ քարոզելով եւ աւետարանը ընթերցելով:



Մի՛ յետաձգեր Յիսուսի յանձնուիլը

«Այսօր, երբ կը լսէք Աստուծոյ ձայնը, ձեր սիրտերը մի՛ փակէք» (Եբր. 4.7): Այս տողերը որ կարդացիր գիտցիր, որ Աստուած կանգնած է առջեւդ եւ կը սպասէ արտօնութեանդ, որպէսզի մուտք գործէ սիրտէդ ներս: Հի՛շո՞ այս պահուն ան կը թակէ սիրտիդ դուռը: Ականջդ մի՛ փակեր Յիսուսի սիրոյ կոչին դիմաց, որպէսզի փակած չըլլաս արքայութեան դուռը դուն քու առջեւդ: Օրինակ առ Դաւիթ մարգարէէն, Մատթէոս աւետարանիչէն, Զակէոսէն, Պօղոսն ու Շիղան կապած բանտապետէն եւ շատ մը ուրիշներէն, որոնք երբ լսեցին Քրիստոսի փրկութեան հրաւերը, անմիջապէս ընդառաջեցին: Եթէ կեանքդ Յիսուսի յանձնելու աշխատանքը յետաձգող մըն ես՝ գիտցի՛ր, որ Սատանան է քեզ մղողը որ այդպէս ընես:

Անգգամը իր հօրը իրատր կ'անարգէ, իսկ ան որ յանդիմանութեան կը հանդուրժէ՝ խոհեմ է: Երբ արդարութիւն տիրէ, ամէն ինչ կը բարգաւառի, իսկ ամբարիշտները արմատախիլ պիտի ըլլան (Առակ 15):



ԵՐԲ ԻՆՔՁԻՆԵՐԴ ԱՍՏՈՒԾՈՅ Կ՛ՈՒԶԵՍ ՅԱՆՁՆԵԼ, Կարդա՛ Սաղմոս 37
+++++

Սիրտդ մի՛ նեղեր չարերուն համար, ո՛չ ալ նախանձէ անօրէն մարդոց: Որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս, պիտի չորնան այնպէս, ինչպէս դալար բոյսը կը չորնայ: Տիրոջ վստահէ եւ բարիք ըրէ, որպէսզի երկրի վրայ ապրիս եւ ապահովութիւն վայելես: Միակ ուրախութիւնդ Տէ՛րը թող ըլլայ, եւ ինք սիրտիդ բոլոր բաղձանքները պիտի տայ: Քու կեանքդ Տիրոջ յանձնէ, եւ վստահ եղիր, ան ամէն ինչ պիտի տնօրինէ: Ցերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ, իրաւունքդ՝ կէսօրուան արեւուն պէս: Լոռութեամբ հնազանդէ՛ Տիրոջ, սիրտդ մի նեղեր անոնց համար, որ անիրաւ յաջողութեան կը հասնին, եւ անոնց համար, որոնք չարիք կը նիւթեն: Զսպէ՛ բարկութիւնդ, մէկ կո՛ղմ դիր գայրոյթդ. սիրտդ մի՛ նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես: Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին, մինչդեռ Տիրոջ վստահողները երկիրը պիտի ժառանգեն: Ժամանակ մը ետք՝ ամբարիշտը ա՛լ գոյութիւն պիտի չունենայ. որքան ալ փնտոես՝ անոր հետքն իսկ պիտի չգտնես: Բայց հեզերը պիտի ժառանգեն երկիրը, եւ կատարեալ խաղաղութիւն պիտի վայելեն:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԱԳԻՐԿԷՆ